

# ՀԱՐՑԱԶՐՈՅՑ՝

# ՀԱՅԿԱԶԵԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

# ԴՈԿՏ. ՎԵՐԱՊԱՏՈՒԵԼԻ ՓՕԼ ՀԱՅՏՈՍԹԵԱՆԻ ՀԵՏ

«Ժառանգութեան Շէնք»-ի փառաշուք բացման առթիւ

Պէյրուք, 6 Մայիս 2010



«Իմ կատարելիքս՝ 1955թ-էն սկսած մեծ երապին շարունակութիւնն է»

**ՀԱՐՑՈՒՄ.-** Որպէս Սփիւռքի միակ համալսարան՝ Հայկազեանի Նախագահ՝ մի քանի օր առաջ փառաշուք կերպով բացումը կատարեցիք «Ժառանգութեան Շէնք»-ին (Heritage Building): Ի՞նչպիսի իրավիճակի մէջ կը գտնուի այսօր համալսարանը եւ որո՞ւք են Ձեր ծրագիրները:

**ՊԱՏԱՍԽԱՆ.-** 2002թ-ին երբ ինձի առիթ ընծայուեցաւ որ պատասխանատուութիւնը ստանձնեմ Հայկազեան Համալսարանին, յայտարարեցի որ իմ կատարելիքս՝ 1955թ-էն սկսած մեծ երապին շարունակութիւնն է: Ես ոչ մէկ բան սկսելու եկայ, այլ ընդհակառակը՝ շարունակելու աշխատանքը՝ անցեալը սեպելով որպէս հաստատուն հիմք գեղեցիկ ոգիի, որ ներկայ է Հայկազեանի ծնունդին պատմութեան մէջ: Բոլոր պատասխանատու նախագահները եւ պատասխանատուները գետինը պատրաստեցին յաջորդ սերունդներուն համար՝ որպէսզի հաստատութիւնը ծաղկի: Ուրեմն ենթահողը պատրաստ էր որպէսզի յատուկ առիթներով եւ այն ժամանակով որ Աստուծմէ ինձի տրուած է, շարունակեմ այս գործը:

Վերջին տարիներու ընթացքին, միշտ կը յիշէի այն նախադասութիւնը, որ 2002թ-ին արտայայտեցի հարցալրոյցի մը ընթացքին՝ ուր կը հարցնէին հայկական այս իրականութեան մասին՝ որուն անունն է Հայկազեան- թե՛ պէտք է Հայկազեանը ներկայացուի որպէս անհրաժեշտութիւն մը Հայաստանին եւ հայութեան համար: Անշուշտ հայութիւնը եւ Հայաստանը Հայկազեանի համար կարելորդ են, բայց պէ՛տք է ըլլայ նաեւ հակառակը՝ որպէս կարելորդ գործօն մը հայկական իրականութեան մէջ, այնպիսի հաստատութիւն մը՝ որուն գոյութեամբ ամէն մարդ պատիւ պգայ:

Հայկազեանը իւրայատուկ հաստատութիւն մըն է, ակադեմական լրջութեամբ, ստեղծած է ընկերային ու բարոյական, կրթական մթնոլորտը՝ որ իր դրական ներդրումը կ'ունենայ մեր ժողովուրդին վրայ: Հայկազեանը կարելորդ կը սեպէ դաստիարակել սերունդները եւ ցոյց տալ թէ ո՛չ համայնքային եւ ո՛չ ալ յարանուանական, քաղաքական, կուսակցական թէ տնտեսական մակարդակի վրայ խտրութիւն կարելի է դնել: Այս հաստատութիւնը դարբնոց մըն է, ուր մենք պիտի սորվինք որ բոլորս մէկ իրականութեան, կեանքի եւ ժողովուրդի մը մասնիկն ենք, եւ այնպիսի առանձնաշնորհեալ իրավիճակի մէջ կը գտնուինք, որ մեր դռները կը բանանք ծառայելու մեր շրջակայ ժողովուրդներուն, կրօններու հետեւորդներուն, այլ խօսքով՝ բոլոր տեսակի մարդոց:

Հայկազեանի միակ յատկութիւնն ու շնորհքը այդ չէ որ ինք հայկական է եւ հայապատկան: Այլ ա՛յն՝ որ պատրաստ է մրցելու բոլոր համալսարաններուն հետ. եւ վստահ եղէք որ Լիբանանի մէջ այսօր գործող 45 համալսարաններուն լաւագոյն տասնեակին մէջ է որ տեղ կը գրաւենք: Այս չի՛ նշանակեր որ Հայկազեանը հասած է հո՞ն ուր մենք կ'ուզենք պայն տեսնել: Տակաւին շատ ճամբայ ունինք կտրելիք, անման ուղիի մէջ եղած է հաստատութիւնը երկար տարիներ եւ տակաւին պիտի շարունակէ աճիլ: Թե՛ կրթական ծրագրի հիմքերով, թե՛ նիւթական կարելիութեամբ, եւ կարողականութեամբ եւ թե՛ իր ակադեմական կամ հայագիտական ծրագիրներով, Հայկազեանը շատ աւելին ունի տալիք եւ կատարելիք եւ... ակնկալելիք:

Անձնապէս կրնամ ըսել , որ ինձմէ ալ շատ բան կ'ակնկալուի եւ Աստուած մեզի շնորհ եւ կարողութիւն տայ՝ որ գործակցաբար Հայկազեանի մէջ ու շուրջ գտնուողներուն, ինչպէս նաեւ Հայկազեանի հովանաւոր հայ Աւետարանական եկեղեցիին եւ Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութեան եւ բոլոր հայկական հաստատութիւններուն, ֆոնտերուն, անձնաւորութիւններուն եւ գաղութներուն օժանդակութեամբ՝ Համալսարանը լաւագոյնին հասնի: Հաւատացէք որ մարդ, եթէ Հայկազեանին իր նպաստը բերէ, ամբողջ հայ ժողովուրդին պատիւին է որ իր նպաստը բերած կ'ըլլայ:

2005թ-ին Հայկազեանի 50-ամեակին առիթով եւ անկէ ի վեր՝ յաճախ մտքիս մէջ դրսեւորուած կը գտնեմ ա՛յն ծանր պարտականութիւնը, թէ Հայկազեանի նման հաստատութիւններուն տրուած է վերագտնելու այն ինչ որ կորսուեցաւ: Վերագտնել այն՝ որ կորսնցուցինք Մեծ Եղեռնի, Ցեղասպանութեան, տեղահանութեան, հողերու պարպումին, եւ բարոյալրկումին այդ մեր երկար ու դաժան տարիներու ընթացքին: Այսպիսի մտապատկերով եւ մեր ժողովուրդի ժառանգութեան ընդմէջէն կ'ուզեմ տալ մեր բացած նոր շէնքին՝ «Heritage Building»-ի կամ «Ժառանգութեան Շէնք» կոչումը. իրականութեան մէջ ան կը պատկանի Պէյրուք քաղաքի 1930-ական թ.թ. ճարտարապետական ժառանգութեան: Հողը գնուած էր 2004 թ-ին, եւ համալսարանը վերջին երեք տարիներուն՝ 2008-2010-ին հսկայական շինարարութեան եւ

նորոգութեան ձեռնարկեց:

Նուիրատուութեան մասնակցեցան տասնեակներով հայորդիներ, ունաք նաեւ ոչ հայեր, որոնք օժանդակութեան ձեռք երկարեցին: Հանգանակութիւնը դեռ փակուած է: Մենք տակաւին պէտք ունինք մեծ գումարներու, որպէսզի մեր բոլոր պարտաւորութիւնները լրացնենք «Ժառանգութիւն» շէնքի նկատմամբ: Այս բացումը վանապան պատգամներ տուաւ մեր շրջապատին, մանաւանդ այն՝ որ հայութիւնը ուր ալ գտնուի, կրնայ յառաջխաղացք արձանագրել՝ մրցակցելով ուրիշին հետ եւ որակի իմաստով լաւագոյն ծառայութիւնն ու ճաշակը հրամցնել:

Քաղաքական բարձրաստիճան մարդոց ներկայութեամբ բացումը կատարեցինք, ուր անոնք արտայայտուեցան թէ մինչ Լիբանանի պետութիւնն ու հեղինակութիւնները տէր չեն կանգնած Պէյրութի մշակութային ժառանգ ու արժէք ներկայացնող շէնքերուն, Հայկապեան համալսարանը այս բնագաւառին մէջ իւրայատուկ յաջողութիւն արձանագրեց:

Այս կատարուածը վարձագումն ընթացքին մէկ փաստն է միայն: Համալսարան մը եւ կրթական հաստատութիւն մը տեղաբայի մէջ ըլլալով կը նահանջէ: Այն միշտ աճման մէջ պէտք է ըլլայ եւ այդ՝ ո՛չ միայն ֆիզիքական եւ նիւթական իմաստով: Մենք կ'ապրինք ֆիզիքական աշխարհին մէջ: Ես հոգեւորական մարդ ըլլալով՝ հոգին ամենէն արժեքաւորը կը սեպեմ շնորհուած Աստուծոյ կողմէ, սակայն լաւ գիտեմ որ ֆիզիքականն ալ շնորհք է: Հայկապեանն ալ իր կարգին ֆիզիքական պարգեւ ստացաւ եւ կը բաժնէ շրջապատին: Հայերն ու ոչ-հայերը քաջալերուեցան երբ անոնք տեսան որ մենք ոչ միայն առնելիք՝ այլ շատ բան ունինք տալիք մեր շրջապատին: Առանց Աստուծոյ շնորհքին՝ մենք ոչինչ ենք եւ ոչ մէկ բան կրնանք ընել: Բայց կ'ուզեմ շեշտել, որ Աստուած կը գործէ նաեւ մարդոց միջոցով, եւ բոլոր անոնք որոնք տակաւին առիթ չունեցան մասնակցելու Հայկապեանի կեանքին եւ օժանդակելու անոր վերելքին, նեցուկ կանգնելու առիթները հոն են եւ մի՛շտ բաց:

Տարիներ շարունակ շատեր օժանդակած են Հայկապեանին եւ անոր ուսանողներուն, վանապան ֆոնտերու միջոցով: Սակայն մենք միշտ պէտք ունինք աւելին տալու մեր ժողովուրդին եւ հարեւան ժողովուրդներուն: Ներկայ առիթը 55 ամեակն է Հայկապեանին որ տօնակատարութեան հոգիով «Թագադրուեցաւ» «Ժառանգութեան Շէնք»ի բացումով, որոնք ներկայ գտնուեցան հայ թէ լիբանանցի պետական ու ազգային դէմքեր, նաեւ Միացեալ Նահանգներէն մեծ թիւով հիւրեր, խնամակալութեան անդամներ՝ որոնք ուրախութեամբ մասնակցեցան մեր այս գործունէութեան:

ՀԱՐՅՈՒՄ.- Այսօր գիտենք թէ մեծ ծրագիրներ կան, եւ Հայկապեան համալսարանը դուրս եկած է նեղ-հայկական շրջանակներէ՝ համա-լիբանանեան եւ տարածաշրջանային առումով, որպէս ակադեմական հաստատութիւն: Որո՞նք են Ձեր ծրագիրներն ու պատգամը՝ մեր ընթերցողներուն:

ՊԱՍՏԻՍԱՆ.- Հիմա որ կրնանք շէնքերով եւ մասնաշէնքերով բաւարարուած չգալ՝ ունինք աւելի լայն տեղ երկու տեսակի աշխատանքի համար: Առաջինը՝ ակադեմական ծրագրի մեր վերանորոգումն է, կամ կրթահամակարգի վերամշակումը: Մենք լրիւ լիբանանեան համալսարան ենք ու գործակցութեան ու մրցակցութեան մէջ ենք այլ համալսարաննրոն հետ: Մենք այս իմաստով պարտականութիւնը ունինք նորոգելու եւ մշակելու մեր կրթական ծրագիրը, եւ յառաջդիմութեան եւ վարձագումներու հետ քայլ պահելու:

Երկրորդ՝ մենք մեր ծրագրի ռճով եւ

բովանդակութեամբ՝ ամերիկեան Liberal Arts ուսման ծրագրին կը հետեւինք: Այս իմաստով մեր ծրագիրները պիտի վարձագնենք տարածաշրջանային ու համաշխարհային համալսարաններու դասընթացներուն հետ նաեւ մրցելով եւ անոնցմէ սորվելով: Պէտք է շարունակաբար նորոգութիւն բերենք Հայկապեանին: Այս իմաստով յաջորդ տարի մի քանի մասնագիտութիւններ աւելցնելու աշխատանքին մէջ ենք:

Նաեւ կը ծրագրենք ընդարձակել հրատարակչական աշխատանքը, որուն, մասամբ մը, 2010-ին վարկ տուինք: Այս տարի նուազագոյնը երեք գիրք պիտի հրատարակենք: Հրատարակութիւններու կ'առնչուի հետազոտական աշխատանքի (Research) վարձագումը, եւ՝ ոչ միայն հայագիտական նիւթերով: Ասոնք կատարելու համար պէտք պիտի ըլլայ համագործակցութիւն արձագնել Լիբանանի եւ արտերկրի համալսարաններու հետ՝ Հայաստանեան հայրենիքի, Եւրոպայի եւ Ամերիկայի կրթական բարձրագոյն կառոյցներուն հետ: Այս բոլորը կատարելու համար՝ Հայկապեանի հիմնադրամը (Endowment Fund) պէտք է մեծ համբերութեամբ վարձանայ, նուիրատուութիւններ ստանայ, որպէսզի կարողանանք այս շատ ծախսալից ծրագիրները իրականացնել:

Ես պիտի փափաքէի որ հայկական Սփիւռքը ծանօթանար Հայկապեան համալսարանին որպէս իւրայատուկ երեւոյթ: Այսինքն՝ ամէն հայ հետաքրքրուէր անոր լուրերով, համացանցի ու թերթի միջոցով կարդար, նաեւ այցելէր, ծանօթանար եւ ուրախանար իր օժանդակութիւնը բերելով ոչ միայն նիւթական՝ այլ նաեւ գործնական ու բարոյական ամէն իմաստով: Մենք զմեզ կը նկատենք մէկ մասը այն ամբողջութեան՝ որ կը կոչուի հայ ժողովուրդ, որուն ծառայութեան մէջ մեր ինքնութիւնը կը գտնենք: Կը խնդրէի որ եթէ կան Սփիւռքի մէջ աշակերտներ՝ որոնք կը փափաքին ընդգրկուիլ եռամսեակ մը, կամ տարի մը՝ Հայկապեանի համալսարանին ուսումնական ծրագրին մէջ, հիւրընկալուէին մեր մօտ, ծանօթանային լիբանանահայ գաղութին եւ անոր կայտառ Առաքելական - Կաթողիկէ - Աւետարանական կառոյցներուն եւ վանապան կուսակցութիւններուն, միութիւններուն, լրատուական միջոցներուն, արուեստի ու մշակոյթի, բժշկական կեդրոններուն՝ արեւմտահայերէն լեզուին:

Հայկապեան համալսարանի հայ թէ օտար ուսանողները պարծանքով կը դիմեն այս հայկական համալսարանին՝ ուսում ստանալու: Հայուն տրուած պատիւ մըն է այս, որուն վրայ պէտք է գուրգուրանք, զայն փայտալէնք եւ վարձագնենք:

Հիմնուած շատ հարուստ աւանդի մը վրայ՝ Կիլիկեան մեր օրերէն՝ ի շարս հայկական բոլոր համայնքներու ազգային կրթական կրօնական հաստատութիւններուն՝ Հայկապեան ինքզինք կը սեպէ այդ աւանդին վրայ հիմնուած բերդ մը:

Կը փափաքէի որ ամէն հայ իր վաւակները դաստիարակէր այն հոգեբանութեամբ որ ան ունի մեծ ժառանգ մը՝ եւ բաց ճակատով փոխանցէր մեր քրիստոնէական, մշակութային, կրթական հարստութիւնները՝ որ հարիւրաւոր տարիներու կեանք ունին եւ կը հայթայթեն ուրախութիւն ու պատիւ:

Շնորհակալութիւն նաեւ քեզի Համօ այս գրական եւ լրատուական աշխատանքիդ համար՝ եւ վարձքը կատար:

Հարցազրոյցը վարեց՝  
ՀԱՍՕ ՄՈՍԿՈՅԵԱՆ